**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2024թ. թիվ 777-Ա

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՏԱՇԻՐ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանի 03.10.2024թ. զեկուցագիրը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի տեղակալի օգնական Ալբերտ Դանիելյանին ս/թ հոկտեմբերի 4-ին մեկ օրով գործուղել ք.Տաշիր՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակից տուժած քաղաքացիներին տրված փոխհատուցման նպատակայնության մշտադիտարկում իրականացնելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

X _____

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 4
ք.Վանաձոր